Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ, *Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Ե., 2012, «Եվրոպրինտ» ՍՊԸ, 261 էջ:*

Արմեն Հովսեփյանի վերջերս լույս տեսած այս փաստալից ձեռնարկը հասցեագրված է հասարակագետ-մանկավարժներին, զինվորական ուսումնական հաստատությունների կուրսանտներին ու դասախոսներին, ռազմաքաղաքական պատմության մասնագետներին և, ընդհանրապես, Երկրորդ աշխարհամարտի պատմությամբ հետաքրքրվողներին:

Հայրենական պատերազմի մասին ընդհանրապես, մեր ժողովրդի բացառիկ մասնակցության մասին մասնավորապես, շատ է գրվել: Հեղինակին հաջողվել է, հանրահայտ փաստերն ու երևույթները կրկնելով հանդերձ, անվրեպ վկայություններով ներկայացնել դեռևս քիչ կամ մակերեսորեն լուսաբանված դրվագներ, նաև՝ վիճահարույց կողմեր:

Վկայակոչենք հայտնին: Երկրորդ աշխարհամարտի ամենավճռական՝ ողբերգական ու հերոսական փուլը Մեծ հայրենականն էր, երբ Եվրոպայի նվաճված երկրների վրա ռազմական, տնտեսական ու քաղաքական իշխանություն հաստատած հիտլերյան Գերմանիան, Արևելյան ճակատում, իր հայտնի ու ծպտյալ դաշնակիցների հետ, այդ թվում՝ ֆաշիզմին ամեն ինչով զորակցող և հնարավոր զոհին դարանակալ սպասող Թուրքիան, 1941-ի հուլիսին ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա. 1418 օրուգիշեր տևած այդ արյունալի բախումն անվանվեց խորհրդային ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմ:

Պատերազմական գործողությունների նկարագրության տեսապատկերի վրա հեղինակը ընթերցողին է ներկայացնում բովանդակային առումով հաջող զուգակցված պատմության, միջազգայնագիտության, դիվանագիտության, քաղաքագիտության հատույթում գտնվող փաստավավերագրական հիմնարար աշխատանք: Քննության են առնված Երկրորդ համաշխարհային պատերազմում ծավալվող դեպքերն ու իրադարձությունները: Պրոֆեսիոնալ պատմաբան-քաղաքագետը հաջողված փորձ է անում տեղեկատվական շարադրանքը հարստացնելու բազմաթիվ նոր տվյալներով ու փաստերով, պատերազմին նախորդած՝ հայոց հերոսական ու ողբերգական պատմությանը վերաբերող կարևոր իրադարձությունների արձանագրումով: Նաև մարդկության նախընթաց պատմության մեջ անօրինակ դաժան ու արյունալի պատերազմի ինքնատիպ, երբեմն ոչ ստանդարտ վերլուծությամբ և այդ ենթատեքստում՝ հայության դերի ու տեղի նկարագրությամբ:

Կրկնենք հանրահայտ վիճակագրությունը. «Ժողովուրդների պատերազմին» մասնակցել է շուրջ 600 հազ. հայորդի, որից կեսը՝ ժամանակին ընդամենը 1,3 մլն բնակիչ ունեցող Հայաստանից: Շուրջ 200 հազարը՝ Խ. Միության մյուս հանրապետություններից, իսկ 100 հազարը՝ հայկական Սփյուռքից: Մեծ եղավ

զոհերի թիվը. ավելի քան 200 հազ. հայորդի: Համեմատության համար ասենք, որ պատերազմում հակահիտլերյան կոալիցիայի անդամներ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան համապատասխանաբար կորցրեցին 291,557 և 357,116 մարդ: Մեր ժողովրդի զավակները, բոլոր զորատեսակներում, մասնակցել են ռազմաճակատի տարբեր հատվածներում մղվող կռիվներին, այդ թվում՝ դաշնակից զորքերի շարքերում: Հայազգի ամենաբարձրաստիճան զորավարները ռազմաճակատ և նավատորմ են ղեկավարել, բանակներ ու կորպուսներ մարտի առաջնորդել: Պատերազմի տարիներին և դրանից հետո հայ մարշալների, գեներալների և ադմիրալների թիվը հասնում է 162-ի: Նրանցից 68-ն իր կոչումը ստացել է 1940-1945 թվականներին: Զինվորական բարձր կոչումների արժանացան նաև դաշնակիցների շարքերում կռվող շատ հայորդիներ: Հայկական Սփյուռքն ակտիվորեն մասնակցեց եվրոպական Դիմադրության շարժմանը: Մեր ժողովրդի զավակները թիկունքում ռազմական արտադրություններ էին «գլխավորում, հայ անձնվեր անլեգալները աննկատելի ու դժվարին» ռազմաճակատի մարտիկներ էին…

Գրքում փաստագրական առանձին անդրադարձ կա պատերազմին սփյուռքի մասնակցությանը: Տարաբնակ հայության շրջանակներում ոչ բոլորն էին համամիտ «համայնավարական» գաղափարախոսությանը: Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի, հայ համայնքների միջև պահպանվող զգացմունքային հարաբերությունները բարդանում էին սոցիալիզմ-կապիտալիզմ հակամարտության, հայկական քաղաքական տարբեր կուսակցությունների գաղափարական տարակարծությունների պատճառով: Սակայն քանի որ նրանց բոլորի Մայր Հայրենիքը գտնվում էր ֆաշիզմի թիրախ դարձած երկրի կազմում, ուստի նրանք, մի կողմ դնելով այդ ամենը, ոտքի ելան պաշտպանելու Խ. Միությունը: Եվ հետո, ռասիստական գաղափարներով առաջնորդվող ֆաշիզմը և այդ հարցում Թուրքիայից գերմանացիների ակնկալիքները հուշում էին, որ դեռևս չի հագեցել թուրքերի արյան ծարավը, որ մոլեգին հայատյացությունը դեռ կենսունակ է: Ուստի հայ ժողովրդի ինքնապաշտպանական-գոյապահպանական ավանդույթների դրսևորմամբ՝ պատերազմը սփյուռքի համար ևս անվիճելիորեն դարձավ Հայրենական:

Խ. Միության վրա հարձակումից անմիջապես հետո, ցուցադրելով իր հավատարմությունը, ավելի շուտ՝ Հիտլերի թելադրանքով, Թուրքիան համալրված և հարձակվելու պատրաստ 26 ընտրովի դիվիզիա տեղադրեց հիմնականում Սիուրյանի աջ ափի երկարությամբ՝ մշտապես լարված պահելով երկրի հարավկովկասյան սահմանը: Բացի այդ, նա Գերմանիային թույլատրեց օգտվել սնծովյան իր նեղուցներից. ֆաշիստական ռազմանավերն ազատ ելումուտ էին անում Սև ծովում՝ գնդակոծելով Սևաստոպոլը, Օդեսան և այլ նավահանգիստներ:

Հենվելով այլոց վկայությունների, իրենց իսկ՝ թուրքերի խոստովանության վրա՝ հեղինակը ցույց է տալիս, որ էթնոսների ֆիզիկական ոչնչացման միջոցով կենսատարածքների նվաճման հիտլերյան հայեցակարգը ձևավորվել է նաև հայերի ցեղասպանության ազդեցությամբ: Գերմանական ռայխը Թուրքիայի գործերում ոչ միայն քաջատեղյակ դիտորդ էր, հավատարիմ դաշնակից-խորհրդատու, այլ նաև ուշիմ աշակերտ: Մահվան ճամբարներն ու ներարկումներով զանգվածային կոտորածը գերմանացիները շատ դեպքում թուրքերից ընդօրինակեցին: Դիպուկ է հեղինակի դիտարկումն առ այն, որ Եվրոպայում գերմանական ազգային մոնոէթնիկ գերիշխանություն հաստատելու և պահպանելու միջոց ծառայող արյունարբու էսէսականները թուրքական ենիչերիների ռեինկարնացիան (վերահայտնությունն) էին:

Համոզիչ փաստերով, հեղինակն անդրադառնում է վերմախտի կազմում խորհրդային ժողովուրդների գերված զինվորներից հավաքագրված «ազգային լեգեոներների» զորամիավորումներին: Պատմական իրողությունների ճշգրտումներ են արվում՝ երևույթը մաքրազերծելով առասպելներից ու մտահորինումներից: Ճիշտ է հեղինակը, երբ վկայում է, որ ազգային լեգեոներների թվում ամենաքիչը հայերն էին, բացի այդ, գերմանացիները մինչև վերջ էլ նրանցից «գլուխ չհանեցին» և հանուն իրենց նպատակի այդպես էլ չկարողացան ցանկացած ձևով օգտագործել նրանց:

Հեղինակի վկայակոչած հայտնի և նորահայտ շատ փաստերն ու քողազերծված գաղտնիքներն ավելի են համոզում, թե գերմանացիների աշխարհակալական նպատակների իրագործման համար իսլամական գործոնի խաղարկումով իրական ինչ սպառնալիք էր կախված Հայաստանի և հայության գլխին: Գրքում փաստագրական անդրադարձ կա պատերազմի ավարտին խորհրդա-թուրքական հարաբերություններին, հիմնականում հայկական պատմական տարածքների հետվերադարձի շուրջ սկսված քաղաքական, դիվանագիտական երկխոսությանը և դրա հետ կապված՝ սփյուռքահայության հայրենադարձությանը: Թուրքիայից հողերը հետ պահանջելու, հատկապես հարցը մոռացումից ասպարեզ բերելու, ավելին, այն միջազգայնացնելու և տարբեր երկրների քաղաքական-դիվանագիտական քննարկման առարկա, մամուլում լայն լուսաբանման նյութ դարձնելու գործընթաց էր դա: Գործի մեջ ներգրավվեցին Հայաստանի ղեկավարությունը, հայոց եկեղեցին, սփյուռքը՝ իր քաղաքական-հասարակական կազմակերպություններով: Թե հետո ինչով վերջացավ այդ ամենը, թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում, ծնելով մեծ հիասթափություն՝ հանրահայտ է: Թվարկվում են պատճառներ, սակայն չի շեշտադրվում ամենակարևորը՝ Խ. Միության «տարածապաշտության» զսպման նպատակ հետապնդող հակահիտլերյան երբեմնի դաշնակիցների դավաճանական և Թուրքիայի հանդեպ աշխարհաքաղաքական շահադետ դիրքորոշումը, որին հանգամանորեն անդրադառնում է հեղինակը:

Եթե խախտենք ժամանակագրությունը և առաջանցիկ անդրադառնանք դարաբաղյան բախմանը թուրքերի մասնակցությանը, ապա կստացվի, որ Մեծ հայրենականից տասնամյակներ անց, Հայաստանի և հայության բերումով թուրքական պլաններում գրեթե ոչինչ չէր փոխվել: Գրքում նկարագրված են դարաբաղյան պատերազմում Թուրքիայի կողմից «հայերի ագրեսիային» ենթարկված, «արյունակից եղբորը»՝ Ադրբեջանին բացահայտ ու գաղտնի օգնության հայտնի և անհայտ դրվագներ: Դիվանագիտական և լրատվական միջոցներով և, իհարկե, զենքով-զինամթերքով ու կովողներով Թուրքիան օգնում էր Ադրբեջանին: Դեռևս 1992 թ., 3 հազար «զգոն» թուրքեր՝ «սրբազան» ռազմիկներ, թուրքերի դավագրգռմամբ հարյուրավոր մուսուլման ուլտրաազգայնականներ՝ պակիստանցիներ, թալիբներ, չեչեններ և այլք, «եղբայր մուսուլմանների» հետ գյավուրների դեմ կռվելու ցանկությամբ շտապեցին Ադրբեջան: Ավելին, 1992 թ. փետրվարին՝ հայ-ադրբեջանական պատերազմի ամենադրամատիկ պահին, հայ-թուրքական սահմանի երկարությամբ ծավալվեց թուրքերի զինուժի 3-րդ դաշտային հարվածային բանակը (1500 տանկ, այդքան էլ զրահամեքենա, շուրջ 250 թնդանոթ ու ականանետ), որի կենտրոնական շտաբը տեղակայված էր Հայաստանի սահմանամերձ Բայրաքդարան բնակավայրում:

Վերջին ժամանակներս, հատկապես Երկրորդ աշխարհամարտի կարևոր իրադարձությունների ու դրվագների տարեդարձի ու հոբելյանների հետ կապված,

ծիսականորեն թեժացվում ու շրջանառվում է պատերազմի համար Գերմանիայի և Խ. Միության «հավասարաչափ մեղսակցության» վարկածը: Բանը հասավ նաև Հայրենական մեծ պատերազմի իրողությունների ու հետևանքների գնահատականների վերանայմանն ու ռևիզիոնիզմին: Արժանի հակադարձման չհանդիպելով՝ անգամ չխորշեցին հայտարարել, թե Միության կազմում գտնվող ժողովուրդներին բռնությամբ զորակոչելով ու նրանց զանգվածաբար զոհելու գնով առաջինը Ստալինն է հրաման տվել ... հարձակվել Գերմանիայի վրա: Բանն այն է, որ այս ստահոդ վարկածները եկան մտան մեր գավառամիտ գործիչների գլուխը:

Հեղինակը հերքում է մեր օրերում քարոզչական նպատակներով կրկին ասպարեզ հանված՝ պատերազմի նախադրյալների, դրա մեղավորների մասին նոր վարկածները: Հատկապես նացիզմի հերոսականացման, «ստալինիզմի» ու «նացիզմի» միջև հավասարության նշան դնելու, Հայրենական մեծ պատերազմը «Եվրոպան բաժանելու ֆաշիստական երկու ռեժիմների՝ Հիտլերի և Ստալինի կռիվ համարողների փորձերը: Դա վիրավորանք է ռազմի դաշտում պատերազմի արհավիրքը տեսած ալեհեր վետերանների, որդեկորույս մայրերի հասցեին: Իհարկե, այս նենգադավ ու ապակողմնորոշող քարոզչությունն առաջին հերթին հասցեագրված է հաղթողների զավակներին ու թոռներին, որոնք դաստիարակվել են հայրենիքին նվիրաբերվելու ոգով և պահպանում են հիշողությունը:

Ներկա Հայաստանում պահպանվում է և հիշողության մեջ ընդմիշտ կմնա Հայրենական մեծ պատերազմի հերոսների ու ընկածների հիշատակը: Այդ մասին են վկայում Հայաստանի բոլոր բնակավայրերում կառուցված հարյուրավոր հուշակոթողները, դեպի ուր տանող ճանապարհը երբեք խոտով չի ծածկվում:

Գրքում, ոչ ի հաշիվ գիտականության, պահպանված է ազատ, հրապարակախոսական խոսքի բնույթը, այդ թվում՝ ընդմիջարկություններ, մտային ընդդիմախոսություններ, անդրադարձումներ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ս. Մ.